

ՍԱՐԳԻՍ ԼԵՊԵԶՅԱՆ

*Եթե պահը հասունացել է, երբեք մի վարանիր ասել «մերսի»: Հավատա, երբեմն, այդ հասարակ թվացող բառը կարող է դիմացինիդ կյանքին իմաստ հաղորդել:

*Մարդը լիովին իրատես /ռեալիստ/ չի լինում: Հոգու խորքում, մենք նույն հույսերով, երազներով ապրողն ենք:

*Երբեք մի մտածեք, որ դուք գեղեցիկ չեք: Կգա մի օր և ձեր ականջին էլ կշշնջան հետևյալ տողերը. «Հնարավոր է աշխարհի համար դու ամենագեղեցիկը չես, բայց ես ունեմ իմ աշխարհը, ուր դու անկրնելի ես»:

*1-ին դեմք՝ ես, 2-րդ դեմք՝ դու, 3-րդ դեմք՝ նա, բայց ես հայտնաբերել եմ նաև 4-րդը: Այստեղ մարդիկ են, ովքեր իրենք էլ չգիտեն, թե ով են, ինչ են ուզում կյանքից: Մարդիկ, ովքեր իրենք էլ չգիտեն՝ իչու են ապրում:

*Անցյալը նման է սրտին: Անընդհատ հիշեցնում է իր մասին: Անցյալը իր հուշերով, իսկ սիրտը՝ զարկերով: Ի տարբերություն անցյալի՝ սիրտը կարող է ապրել առանց անցյալի, իսկ անցյալն առանց սրտի՝ ոչ:

*Ես չեմ մահանա, երբ մոտիկներս լքեն ինձ: Ես չեմ մահանա, երբ սիրեմ, և սիրածս էակը սև լինի գույնի պես՝ ընկալի իմ ողջ սերը և չանդրադարձնի նույնիսկ մի կաթիլ սեր: Ես կմահանամ միայն այն ժամանակ, երբ հույսը լքի ինձ: